

էին իրենց սերնդեամբն և իրենց դաս-
տիարակութեամբը : Ղանչցան որ մե-
ծութիւնը աշխատութեան և իմացա-
կանութեան մէջ կայացած է . և իբրեւ
զթիթեռնիկս որ իրենց պատեանը կը
թողուն կը փախչին , այսպէս իրենք ալ
իրենց անձուկ ու սահմանաւոր ցեղին
մէջէն ելլելով աննիւթաբար՝ մտան
յազթանակաւ մարդկային ընդհանուր
և մեծ ցեղին մէջ : Այս դէպքերուն
միջոցը , մարդիկ վրայ ձանձրութիւնն
ինչուան ոսկրները թափանցելով՝ խեղ-
ճը օր օրուան վրայ կը հալէր կը մաշէր
անկարելի փափաքներով և ընդունայն
յիշատակաց ցաւերով : Ա երջապէս
մահն հասաւ , մարդիկ իր հոգին Աս-
տուծոյ ձեռքն աւանդեց . իր կինն և
իր բարեկամը լացին իր մահուան վրայ :

Վանի մը ամիս ետքը , 1802^ն , ա-
ռաջին հիւպատոսին հրահրանքով՝ նո-
րէն անցան Հռենոսը և ուրախ սրտիւ
դարձան իրենց հայրենիքը , որ իրենց
պէս վերանորոգեր էր : Ետոնցունէ
'ի վեր՝ երկուքն ալ սկսած էին Վաղ-
ղիոյ նոր ստացած փառքերն ախորժիլ
ու հաւնիլ . և երբ այս դիւցազնական
հողուն վրայ ոտք կոխեցին , սրտերնին
եղաւ և քողքը արցունքներ կաթեցին
աչուքներէն : Իրենց կալուածներուն
մեծագոյն մասը ազգին ձեռքը մնացած
ըլլալով , դիւրաւ կրցան ձեռք ձգել զա-
նոնք . անանկ որ աքսորանքի մէջ ան-
ցուցած տարիներն իրենց աչքին առջև
ուրիշ բան մը չէին երեւար՝ բայց եթէ
երկայն երազ մը . միայն թէ , Ապիմե-
նիդեայ հանդիպածին հակառակ , ծեր
պառկեր էին ու երիտասարդ արժններ
էին : Այսպէս իր գղեկին մէջ հաստա-
տուելէն ետքը , կանչեց Վերմանիայէն
իր քովը գեղեցիկ և համեստ օրիորդ
մը՝ որ իր հոն բնակած ատենը հաճոյա-
ցեր էր իրեն , ամուսնացաւ անոր հետ .
բայց շատ չանցաւ , մեռաւ կինը և մանչ
ղաւակ մը թողուց իր երկանը : Այս
տղուն վրայ մեծապէս խնամք տարին
իր հայրն և մարդիկուհին , որոնք նոյն
կեանքը շարունակեցին իրենց միայնու-
թեանը մէջ , բարեգործութիւնները

նելով , և աշխարհիս աղմուկներէն և
փառասիրութենէ հեռու անցընելով ի-
րենց ժամանակը : Աշխատելու սովոր-
ութեանը ինչպէս որ դժուարին է վար-
ժիլը , այսպէս վարժեղէն ետքն ալ ան-
հնարին է ձգելը . մարդիկուհին առջի-
նին պէս նորէն կը նկարէր , և ասպետն
ալ ամէն առաւօտ արշալուսոյն ելլելով՝
տանձենուոյ , ընկուղենուոյ և կաղնիի
փայտերու վրայ կը խաղար իր քերչաւը .
միտքը դրած էր իր բնակարանին մէջ
գտնուած բոլոր որդնակեր փայտաբան-
դակները իր ձեռքովը վայելապէս նո-
րոգելու . երբեմն ալ իր առջի ժամա-
նակներուն յիշատակը կենդանացընել
ուզելով , քանի մը կաղնաբեկ գործիներ
կը շինէր , զորոնք իր երկիրներուն վար-
ձակալաց աղջիկներուն ընծայ կ'ընէր :
Իսկ օրուան մնացած մասը կը սահէր
ընթերցմամբ , շրջագայութեամբ , և
այնպիսի մտերմութեան մը վայելքովը՝
որ ամենեւին չէր նուազած ու պակ-
սած , և Սաւրիտիոսին դաստիարա-
կութեանը հոգ տանելով . և յայտնի
է որ երբ օրերը աշխատութեամբ և
ընտանութեան սիրովը կ'անցնին , շատ
կարճ կ'երեւան :


ԲՆԱԿԱՆՔ

ԿԵՆԴԱՆԱԲԱՆ ՈՒԹԻՒՆ

Ծրածան ձուկն¹ :

Ծածանը ըսուած ձուկը անուշ ջրի
ձուկ է , և շատ յարգի է իր համեղու-
թեանն համար : Իր երկայնութիւնը
սովորաբար մէկ ոտքէն ինչուան երկու
ոտք կը հասնի՝ աչքերէն ինչուան ուղիւն
սկիզբն առնելով . բայց երբեմն ինչուան
երէք ոտքէ աւելի երկայնութեամբ կը
գտնուի : Սարմնոյն ձեւը կանոնաւոր
բոլորչի է . թեփերը՝ որ համեմատու-
թեամբ աւելի մեծ են քան ուրիշ ձկնե-

¹ Գ. Գ. Carpe. ՏՄ . Ստան ԿԱԼԵԼԸ :



Ծածանի ձուկն

րուն թեփերը, միակերպ մի և նոյն գու-
նով չեն. որովհետև թուխ և մութ
գեղին ենթակայի վրայ՝ մերթ ճերմակ
գոյն խառնուած կը տեսնուի, մերթ
կապոյտ, կամ կանաչ, և կամ կարմիր :
Վիտուն ձեն անկիւնաւոր է. աչուրնե-
րը մեծ են, կլոր և կապտագոյն. բեր-
նին քով պէխեր ունի, իսկ բերնին մէջ
ստորին ծամելիքը առանց ակռայի են,
ուր վերին ծամելիքը վեց ակռայ ունին :
Ստորին շրթանց տակը աճառուտ ոսկր
մը կայ, որ ծամելու կ'օգնէ :

Լ.յս ձուկը հաւասարապէս կը բնա-
կի ամէն անուշ ջրերու մէջ, թէ՛ քա-
լուկ ըլլան, թէ՛ մեռեալ և անշարժ .
անոր համար գետերու, լիճերու, ձկնա-
տենից՝ և ճահիճներու մէջ կը գտ-
նուի, բայց ոչ երբեք ծով կ'իջնայ : Իր
ուտելիքն են փափուկ խոտեր, պզտի
միջատներ, ձկնիկներ, և նոյն իսկ իր
ծծած տիղմը անունդ կու տայ իրեն :
Շատ կ'ախորժի հացի միջուկը, և
երբոր աւազաններու մէջ կանոնաւոր
կերպով զինքը կը վարժեցնէ մէկը ա-
նոր, ամէն օր որոշեալ ժամանակին
ինքնիրենը ջրին երեսը կ'ելլայ իր կե-
րակուրն ուզելու համար : Ինչուան այն-
չափ կ'ընտանենայ, որ գլուխը ջրէն վեր
կը վերցնէ և իրեն բարերարին ձեռքէն

կ'առնէ հացի կտորը : Լ.յսպիսի պա-
րագաներու մէջ է միայն՝ որ իրենց խոր
բնակութենէն վեր կ'ելլեն այն մեծ
ծածանները, որոնց մորթին ճերմակու-
թենէն, թեփերուն քիչութենէն և ի-
րենց շարժմանցը դանդաղութենէն կը
հասկըցուի շատ տարեց ըլլալին : Վա-
նի մը բնապատումներ այս ծերութեան
նշանները տեսնելով և այս ձկներէն ո-
մանց արտաքոյ կարգի մեծութիւնը,
ըսին թէ ծածան ձուկը կրնայ ինչուան
հարիւր տարի ապրիլ : Լ.յս կարծիքը
չափազանց է. սակայն հանդերձ այսու
ամենայնիւ՝ իր աճման դանդաղութիւ-
նը մնածելով, հաւանական կը թուի
ըսելը թէ ինչուան վաթսուէն եօթանա-
սուն տարի կ'ապրի :

Ընթի բերան զարմանալ մը կու գայ
մարդուս՝ թէ ինչպէս այս ձուկը չհատ-
նիր, գիտնալով ծածանին թշնամեաց
բազմութիւնը, որոնք իր բոլոր կենացը
մէջ ետեւէն կ'իյնան զինքը սպաննելու :
Լայց բնութիւնը ասոր ալ դարմանն
ըրած է ուրիշ կերպով մը. ստոյգ քըն-
նութեամբ հաստատեցին բնապա-
տումք թէ 14 բթաչափ երկայնութիւն
ծածանի մը հաւկրթի ամանը՝ 262,
224 հաւկրթ կը պարունակէ իր մէջը,
և 18 բթաչափ երկայնութեամբ ծա-
ծանի մը հաւկրթի ամանը՝ 342, 144
հաւկրթ : Լ.յս համեմատութեամբ

հաշիւ ընելու որ ըլլայ մէկը հաւկիթ-
ներուն բազմանալն ըստ ձկան մեծու-
թեանը (որ գրեթէ 20,000 հաւկիթ
կ'իյնայ ամէն մէկ բթաչափ երկայնու-
թեան), կը տեսնէ թէ ինչ անհատ-
նում ծածանի ձագերու բազմութիւն
ամէն տարի կը ծնանի. որով յայտնի
կ'իմացուի թէ անշուշտ շատ մեծ ջարդ
կ'ուտեն ծածանները՝ որ քիչ կը գըտ-
նուին :

Բնականորութենէն աւելի հիանալի
բան մը կայ ծածան ձկան վրայ, որ է
իր շնչառութեան գործարանին կազ-
մութիւնը : Բայցափ միայն ըսենք, որ
այս գործարանը կազմող ոսկերաց, մը-
կանց, ջիղերուն, շնչերակներուն, երա-
կաց և խողովակներուն թիւը՝ տասնը-
եօթը հազար չորս հարիւրէ աւելի է :
Բնշուշտ այս գործարանին աս աստի-
ճանի կատարելութեամբն է՝ որ ծա-
ծան ձուկը ջրէն դուրս ալ կրնայ ապ-
րիլ, որն որ բնաւ ուրիշ ձկան մը վրայ
չտեսնուիր : Բաւական է որ զով տեղ
մը դրուին և այնպիսի դիրքով՝ որ շնչա-
ռութեան արգելք չըլլայ, ծածանները
երկայն ատեն ջրէն դուրս օդուն մէջ
կ'ապրին . ինչպէս որ կ'ընեն Հոլանտա-
ցիք և Բնգղիացիք՝ աղէկ գիրցընելու
համար զանոնք : Վիսետան մէջ կը կա-
խեն զանոնք ուռկանի մը մէջ և խոնաւ
մամուռի վրայ դրած, բայց այնպիսի
կերպով՝ որ գլուխնին ցանցէն դուրս
ելլէ . և կաթի մէջ թաթխած ճերմակ
հացով կը կերակրեն :

Երածան ձուկը առանց այս կերպով
ալ սնանելու, միշտ համով է և շատ ա-
խորժելի . իր սերմը անանկ գոյացական
է, որ բարակցաւի օգտակար է . լեզուն
ալ անուանի է իր համին համար, ինչ-
պէս որ հին ատենի շատակերները սի-
րամարգի լեզուն կը գոլէին : Բմէն ե-
ղանակի մէջ նոյնչափ ախորժահամ չէ
ծածանը . մայիս և օգոստոս ամիսնե-
րուն՝ որ իր ձկնելու ժամանակն է, նի-
հար է և համ չունի . և իր բուն ուտուե-
լու միջոցը՝ մարտ ու ապրիլ ամիսներն
են : Բսկէ զատ՝ գետերու և ձկնատե-
նից ծածաններուն մէջ շատ տարբերու-

թիւն կայ . այս յետինները տղմուտ են,
և առջիններուն չափ յարգ չունին :
Պաղղիա առատաբար կը գտնուի ծա-
ծանը, մասնաւորապէս Սէյն և Սուառ
գետերուն մէջ . նմանապէս երևելի
են Հռենոսի ծածանները : Բայց ա-
սոնց ամէնն ալ չեն հասնիր Չինաստա-
նի Սանկ-Տոյի ծածաններուն . հոն
տեղի մանտարիները երբոր խնդիրք մը
ունին կայսերմէն, Սանկ-Տոյի ծա-
ծաններէն կը խրկեն ի Բէքին մեծա-
մեծներուն՝ սրտերնին շահելու համար,
որով ապահով կ'ըլլան իրենց խնդիրքին
կատարուելուն վրայ :

ԲՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Օրաչափ գործի :

() Դաշափ գործւոյն և իր շէնքին վը-
րայօք ուրիշ անգամ համառօտ տեղե-
կութիւն մը դրած ենք օրագրիս մէջ :
Հոս կ'ուզենք նշանակել տեղն ի տեղը
իր ըրած գլխաւոր շարժումներն ու
ընթացքը, որով զանիկայ գործածող-
ները իրենց օգաչափին հետ խօսակցե-
լու որ ըլլան, կարենան անոր լուռ լե-
զուն անսխալ հասկընալ :

Ա . Երբոր սնդիկը շատ կը բարձրա-
նայ կամ շատ կ'իջնայ, նշան է թէ օդը
պիտոր փոխուի : Բնդհանրապէս՝ սընդ-
կին անհաստատութիւնը օդուն ան-
հաստատութենէն կը պատճառի :

Բ . Սնդկին վար իջնալը՝ միշտ ան-
ձրեւ ճնշանակեր, հապա նաեւ քամի ալ :
Բամինները կ'աւելցընեն կամ կը նուա-
զեցընեն մթնոլորտին զանգուածը՝ ջը-
րային գոլորշիներն ու ամպերը միաւո-
րելով կամ ցրուելով . ուրեմն հարկ է
որ իւրաքանչիւր քամի ըստ իրեն հան-
գամանացը բարձրացընէ կամ իջեցընէ
զօդաչափը, որով այս գործին կը նշա-
նակէ նաեւ քամիներու զանազանութիւ-